ԳԻՏՆԱԿԱՆԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ

ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Մարդկության առաջ ծառացած մի շարք պրոբլեմներ, այդ թվում՝ կայուն խաղաղության, տարբեր հասարակարգերի խաղաղ գոյակցության, էկոլոգիական, էներգետիկ և այլ կարգի, ինչպես նաև աշխարհի վրա կախված միջուկային պատերազմի սպառնալիքը ստիպում են նորովի գնահատել գիտականի բարոյական և սոցիալական պատասխանատվության բնույթն ու փոխհարաբերությունը։ Դրա կարևորությունը վեր է ամեն մի կասկածից և ավելի ու ավելի է մեծանում, որքանով գիտությունը տեսության բնագավառից ավելի է խորանում դեպի պրակտիկայի բնագավառ, որքանով մեծանում են բնության երևույթների և պրոցեսների վրա ազդելու գիտության հնարավորությունները։ Այդ ամենը բարձրացնում է ոչ միայն գիտության, այլև գիտնականի հասարակական ստատուսը, փոխվում է նրանց նկատմամբ եղած նախկին վերաբերմունքը, և դա հատկապես այն բանից հետո, երբ վերջնականորեն պարզ է դառնում, որ «մարդկային ցեղի դեմ վճռական հարձակումները այժմ սկսվում են գծագրական տախտակներից ու լաբորատորիաներից»[1]։

Մասնագիտական գրականության մեջ գիտնականի բարոյական պատասխանատվության ծագման վերաբերյալ միասնական կարծիք չկա (ի տարբերություն սոցիալական պատասխանատվության, որի ծագումը կապվում է ժամանակակից բնագիտության առաջացման հետ)։ Գիտնականի բարոյական պատասխանատվությունը առաջացել է գիտության ծագման հետ միաժամանակ և հիմնականում կրել է անհատական-բարոյագիտական բնույթ, սահմանափակվելով սոսկ ներգիտական դրսևորումներով՝ կապված գիտական հետազոտության բնագավառի, հետազոտության առարկայի և մեթոդների ընտրության, գիտական բանավեճերի և այլնի հետ։ Սկսած այն ժամանակվանից, երբ արդի բնագիտությունը, հետագայում նաև հասարակագիտությունը, պայմանավորեցին նախ տեխնիկական (XVIII դ.), ապա արդյունաբերական (XVIII—XIX դդ.) հեղափոխությունները, արմատական փոփոխություններ մտցնելով հասարակության արտադրողական ուժերի մեջ և փոփոխելով նաև հասարակական հարաբերությունները, ծագում է նաև գիտնականի սոցիալական պատասխանատվությունը, որը հանդես է գալիս որպես գիտնականի բարոյական պատասխանատվության դիալեկտիկական բացասում։

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած սոցիալիստական հեղափոխությունը և 50-ական թվականներին ծայր առած գիտատեխնիկական հեղափոխությունը նոր խնդիրներ և պայմաններ առաջադրեցին գիտության հետագա զարգացման ճանապարհին։ Այն կարծիքները, որ գիտությունը ընդունակ է բացահայտել բնության և հասարակության սոցիալական կառավարման ճշգրիտ օրենքները, միևնույն ժամանակ դուրս մղելով բարոյական չափանիշները հասարակության կյանքից, դուրս եկան անհիմն։ Պարզվեց, որ զուտ գիտական, ճշմարտային չափանիշներով գնահատվող ելակետերի հետ մեկտեղ անհրաժեշտ է դնել նաև բարոյական, մարդասիրական չափանիշներ, որոնք գիտության առաջընթացը բնութագրում են ոչ միայն գիտական, այլև մարդկային կյանքի իմաստի, մարդկության բարօրության ու նրա երջանկության տեսանկյունից։

Գիտատեխնիկական հեղափոխության ժամանակակից պայմաններում, երբ գիտությունը ընդունակ է դարձել «հրաբխի նման» կործանելու հազարամ-

---

1 *Ռ. Ցունգ, Հազարավոր արևներից պայծառ, Երևան, 1961, էջ 18—19։*

յակների ընթացքում մարդկության ստեղծած քաղաքակրթությունը և պետությունների ու կառավարությունների ներքին քաղաքականությունից վաղուց արդեն դուրս է եկել արտաքին քաղաքականության բնագավառ, ծառացել է բարոյական արժեքների և չափանիշների վերագնահատման անհրաժեշտությունը։ Եվ բնական այն նույն օրինաչափությամբ, ինչով սոցիալական պատասխանատվությունը բացասեց բարոյական պատասխանատվությունը, այդ նույն օրինաչափությամբ էլ այժմ տեղի է ունենում սոցիալական պատասխանատվության բացասումը պատասխանատվության մի նոր որակով, որը որոշ հեղինակներ անվանում են սոցիալ-բարոյական պատասխանատվություն (Մ. Մեդյանցևա[2] և ուրիշներ)։ Գիտնականի պատասխանատվության այդ նոր որակը մենք անվանում ենք գլոբալ բնույթի բարոյական պատասխանատվություն, որը որոնում է կարգավորման այնպիսի միջոցներ, որոնք ազգային, դասակարգային, պետական և տեղային չափանիշներից բարձրանում են դեպի համամարդկային և գլոբալ չափանիշները։

Կապիտալիստական հասարակության պայմաններում տիրապետող «առավելագույն արդյունք՝ նվազագույն ծախսերի շնորհիվ» սկզբունքը հասարակության առաջ դնում է գլոբալ բնույթի մի շարք պրոբլեմներ, ինչպիսիք են օդային և ջրային ավազանների աղտոտումը, բնական ռեսուրսների գիշատչային օգտագործումը և այլն, որոնք լրացուցիչ ծախսերի կարիք են զգում։ Մինչդեռ կապիտալիստական ձեռնարկությունների միջև գոյություն ունեցող մրցակցությունը խոչընդոտում է այդ պրոբլեմների դրական լուծմանը։

Հասարակության զարգացման պատմության ընթացքում գիտնականի վրա միշտ էլ դրվել է հատուկ առաքելություն։ Նա ոչ միայն պետք է ստեղծեր և ապահովեր գիտության առաջընթացը, այլև պարտավոր էր կազմակերպել և կառավարել նրա հետագա ընթացքը, ընդ որում այնպես, որ գիտական հետազոտությունների արդյունքները ծառայեն մարդուն, երբեք դուրս չգալով նրա դեմ։ Գիտության զարգացման այս կողմի վրա մեծ ուշադրություն է դարձնում կոմունիստական կուսակցությունը. դա հատկապես երևում է ՍՄԿԿ XXIV, XXV, XXVI համագումարների, ինչպես նաև ՍՄԿԿ Կենտկոմի վերջին պլենումների նյութերում, որտեղ խնդիր է դրվում գիտատեխնիկական հեղափոխության հնարավորությունները զուգակցել սոցիալիստական հասարակության առավելությունների հետ։ Ներկայումս կոմունիստական կուսակցությունն ու սովետական ժողովուրդը լուծում են աննախընթաց մասշտաբի խնդիրներ, իրականացնում են սոցիալ-տնտեսական խոշորագույն կոմպլեքսային ծրագրեր, այդ թվում՝ պարենային ու էներգետիկ ծրագրեր, ձգտում են ինտենսիվացնել արտադրությունը, արագացնել գիտատեխնիկական առաջադիմությունը, կերպարանափոխում են հսկայական ռեգիոններ, հաստատակամորեն պայքարում են այն բանի համար, որ «մեր էկոնոմիկայի, գիտության, մշակույթի վիթխարի հնարավորությունները, մեր բնական ռեսուրսները օգտագործվեն որքան կարելի է ավելի լրիվ ու արդյունավետ»[3]։ Այդ պատճառով էլ գիտնականների առաջ դրվում են մի շարք կարևոր խնդիրներ, որոնց լուծման անհրաժեշտությունը դարձել է առաջնահերթ ու վճռորոշ։ Սակայն, ինչպես նշվում է ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումի նյութերում, շատ անգամ գիտական հիմնարկները «սեփական «դիսերտացիոն» և խմբային շահերի մեջ ներփակվելը, մանրաթեմայնությունը»[4] համարում են ավելի առաջնային։ Իհարկե, այստեղ առկա է պատասխանատվության մեկ այլ մակարդակ, որը մասնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել «դրական պատասխանատվություն» ի տարբերություն գիտնականի «բացասական պատասխանատվության»։ «Բացասական պատասխանատվությունը» հանդես է

---

2 М. П. Медянцева, Ответственность ученого как социально-этическая проблема, Казань, 1973.

3 «ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի նյութերը (14—15 հունիսի, 1983)», Երևան, 1983, էջ 33։

4 Նույն տեղում, էջ 37։

գալիս այն դեպքում, երբ գիտության նվաճումները սպառնում են մարդկության առաջընթացին։ Սակայն մեր խնդիրը այժմ գիտնականի «դրական» և «բացասական» պատասխանատվությունների առանձնահատկությունների բացահայտումը չէ, այլ բարոյական և սոցիալական պատասխանատվության փոխհարաբերության հարցը։ Յուրաքանչյուր դարաշրջան, յուրաքանչյուր հասարակություն այս պրոբլեմները դնում և լուծում է յուրովի։ Կապիտալիստական հասարակության մեջ գիտնականի բարոյական պատասխանատվության հիմնական առանձնահատկությունը նրանում է, որ նա համոզված չէ, թե իր կառավարությունը գիտության նվաճումները չի կիրառի ի վնաս մարդկության, ի տարբերություն սովետական գիտնականների, որոնք միանգամայն վստահ են, որ գիտության նվաճումները երբեք չեն ուղղվի հասարակական առաջընթացի դեմ։ Սակայն, մյուս կողմից, գիտության ինտերնացիոնալացումը հնարավորություններ է ստեղծում, որ սովետական գիտնականների գիտական նվաճումները նույնպես կապիտալիստական հասարակության պայմաններում ձեռք բերեն հակահասարակական կիրառելիություն։

Գիտնականի բարոյական պատասխանատվության աստիճանը կայուն մեծություն չէ, այն կարող է կտրուկ փոփոխություններ կրել՝ կապված գիտական գիտելիքի մակարդակի, գիտության և պրակտիկայի կապի խորացման հետ, որն ավելի ակնառու է դառնում հասարակության զարգացման բեկումնային շրջաններում։ Հասարակության զարգացման խաղաղ շրջաններում, երբ գիտության առաջընթացը սերտորեն կապվում է հասարակության ընդհանուր առաջընթացի հետ և հիմնականում ուղղված է հասարակության արտադրողական ուժերի զարգացմանը, նյութական ու էներգետիկ ռեսուրսների ստեղծմանը, և գիտության «կործանարար» հնարավորությունները մղվում են երկրորդ պլան, հաճախ ստեղծվում է այն թյուր կարծիքը, թե գիտության և բարոյականության փոխհարաբերության, գիտնականի բարոյական պատասխանատվության պրոբլեմները ժամանակավոր բնույթ ունեն։ Նման դիրքորոշումները արդարացիորեն քննադատվում են թե՛ սովետական և թե՛ արտասահմանյան առաջադեմ գիտնականների կողմից։ Այս առումով միանգամայն իրավացի է Ա. Շվեյցերը, երբ ընդգծում է, որ, ոչ թե «պատերազմներն են առաջ բերում բարոյականության ու մշակույթի անկում, այլ պատերազմն ինքը հանդես է գալիս որպես բարոյականության ու մշակույթի անկման արդյունք»[5]։

Գիտնականի բարոյական և սոցիալական պատասխանատվության դրսևորումը բարդ և հակասական պրոցես է՝ պայմանավորված մի շարք արտաքին ու ներքին գործոնների առկայությամբ։ Ոչ պակաս բարդ ու հակասական երևույթ է նաև գիտնականի բարոյական և սոցիալական պատասխանատվության կապի և փոխհարաբերության հարցը, որի մասին սովետական և արտասահմանյան գիտական գրականության մեջ գոյություն ունեն միանգամայն տարբեր կարծիքներ. դրանք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի։

Առաջին խմբի ներկայացուցիչները[6] արհեստականորեն նեղացնում են գիտնականի սոցիալական պատասխանատվության բովանդակությունը՝ նույնացնելով բարոյական պատասխանատվության հետ։ Ինչ խոսք, որ նման վերաբերմունքը չի համապատասխանում հարցի իրական դրվածքին, քանի որ գիտնականի սոցիալական պատասխանատվությունը ավելի ընդհանրական երևույթ է։ Որոշ հեղինակներ սոցիալական պատասխանատվության տակ հասկանում են ոչ միայն բարոյական, այլև քաղաքական և իրավական[7], ուրիշները

---

[5] А. Швейцер, Культура и этика, М., 1973, с. 33.

[6] В. С. Емельянов, Ответственность ученых, М., 1962; Ю. А. Жданов, Социальная ответственность естествоиспытателя («Проблемы мира и социализма», 1973, № 12).

[7] Л. Гринберг, Е. Долгов, Материальные качества строителя коммунизма и свобода нравственного поведения («О коммунистической морали», Л., 1962, с. 245).

ավելացնում են նաև՝ նյութական[8], երրորդները՝ մասնագիտական[9] պատասխանատվությունը և այլն։ Երկրորդ խմբի ներկայացուցիչները[10], ի տարբերություն առաջինների, ուռճացնում են բարոյական պատասխանատվության բովանդակությունը, այն հասցնելով մինչև սոցիալական պատասխանատվության մակարդակը։ Նման տեսակետը նույնքան անընդունելի է բարոյական և սոցիալական պատասխանատվության փոխհարաբերության հարցը պարզաբանելիս, որքան և առաջինը։ Այս սխալը գալիս է նրանից, որ բարոյական պատասխանատվությունը այս կամ այն չափով առկա է սոցիալական պատասխանատվության մյուս ձևերի մեջ։ Ընդունելով բարոյականի առկայությունը սոցիալական պատասխանատվության յուրաքանչյուր ձևի մեջ, անհրաժեշտ է նշել, որ անգամ սոցիալիստական հասարակության մեջ, որտեղ սոցիալական և բարոյական խնդիրներն ու նպատակները կարող են համարժեք լինել, մենք չպետք է խոսենք նրանց նույնության մասին, քանի որ սոցիալական պատասխանատվության մյուս տեսակները իրենց էությամբ և բնույթով տարբերվում են բարոյական պատասխանատվությունից և օժտված են ինքնուրույն գոյության իրավունքով՝ սոցիալիզմի պայմաններում լրացնելով և խթանելով, իսկ կապիտալիզմի պայմաններում խոչընդոտելով և հակադրվելով բարոյական պատասխանատվության դրսևորումներին։ Սովետական հետազոտող Ն. Տաբունովը, հետազոտելով սոցիալական պատասխանատվության տեսակների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը և կապը սոցիալիզմի պայմաններում, գրում է, որ բարոյական պատասխանատվությունը «համընկնում է քաղաքական և իրավական պատասխանատվության հետ, դրանցից տարբերվելով միայն ծավալով և հասարակական սանկցիաների բնույթով»[11]։ Մեզ թվում է, որ այստեղ անհրաժեշտ է շեշտը դնել ոչ թե «համընկնում է», այլ «տարբերվելով» բայի վրա, ի նկատի ունենալով, որ սոցիալիզմի պայմաններում վերանում են սոցիալական պատասխանատվության տարբեր տեսակների միջև գոյություն ունեցող անջրպետները՝ հնարավորություն տալով ներթափանցելու մեկը մյուսի մեջ։ Սոցիալական և բարոյական պատասխանատվության նույնացումը կամ, այլ կերպ ասած՝ հավասարեցումը, հնարավոր է միայն կոմունիստական հասարակության պայմաններում, երբ հասարակական գործունեության հիմնական շարժիչները և կարգավորիչները ձեռք են բերում բարոյական բնույթ։

Չի կարելի համաձայնել նաև երրորդ խմբի ներկայացուցիչների հետ[12], թեև նրանք հիմնականում ճիշտ են լուծում բարոյական և սոցիալական պատասխանատվության փոխհարաբերության հարցը, երբ այն ներկայացնում են որպես «մասի» և «ամբողջի» փոխհարաբերություն։ Մեր կարծիքով ավելի ստույգ կլիներ այն ներկայացնել որպես «տեսակի» և «սեռի» փոխհարաբերություն, քանի որ բարոյական և սոցիալական պատասխանատվության փոխհարաբերության հարցը որպես «մասի» և «ամբողջի» փոխհարաբերություն ներկայացնելիս ստացվում է մեխանիկական անշրջետում։ Դրանց միջև եղած իրական կապը ճիշտ է արտացոլվում «տեսակ—սեռ» փոխհարաբերության մեջ։ Գիտնականի բարոյական և սոցիալական պատասխանատվության փոխ-

---

8 К. Л. Немира, Субъективные и объективные факторы формирования ответственности как формы социалистических нравственных отношений («Диалектика объективного и субъективного в развитии социалистического общества», М., 1970, с. 261).

9 Н. Н. Соколова, Соотношение оценочного и нормативного в моральной ответственности (автореферат канд. дисс.), Свердловск, 1969, с. 12.

10 В. И. Толстых, Наука и нравственная ответственность ученого («Вопросы философии», 1967, № 4), А. Швейцер, նշվ. աշխ., և ուրիշներ։

11 Н. Д. Табунов, К вопросу о социальной ответственности («Личность при социализме», М., 1968, с. 252).

12 А. Т. Панов, В. А. Шабалин, Социальная ответственность личности в развитом социалистическом обществе, Саратов, 1976.

հարաբերության ոչ դիալեկտիկական, մեխանիկական ըմբռնումը աղքատացնում է ոչ միայն բարոյական պատասխանատվության, այլև սոցիալական պատասխանատվության բովանդակությունը, խոչընդոտում բարոյական պատասխանատվության դրսևորմանը, որպես վարքը կարգավորողի ֆունկցիայի։

Սոցիալական պատասխանատվության տեսակները միմյանցից տարբերվում են մի խումբ չափանիշներով. ա) իրենց ծագումով, բ) պատասխանատվության օբյեկտով, գ) պատասխանատվության առարկայով, դ) վերահսկողության ատյանով, ե) մարդկանց վարքի վրա ներգործելու բնույթով ու եղանակներով և այլն։ Սոցիալական պատասխանատվությունը սոցիոլոգիական կատեգորիա է, որը բնորոշվում է անձի կողմից իր պարտականություններն իրականացնելու գնահատականը, տվյալ պարագայում ընտրելով վարքի բոլոր հնարավոր եղանակներից լավագույնը, ելնելով հասարակության զարգացման պահանջներից և սոցիալական սանկցիաների բնույթից, իսկ անտագոնիստական հասարակության պայմաններում՝ «առաջադիմական ուժերի սանկցիաներից»[13]։ Սոցիալական պատասխանատվության մեջ հիմնական շեշտը դրվում է «հասարակական սանկցիաների բնույթի» և «հասարակության զարգացման պահանջների» վրա, որոնք հանդես են գալիս հասարակական հարկադրանքի և արտաքին ճնշման ձևով։ Սոցիալական պատասխանատվությունը դրսևորվում է այն դեպքում, երբ պատշաճի կատարումը սուբյեկտի կողմից կարող է իրականանալ նաև հակառակ նրա ցանկության, մինչդեռ բարոյական պատասխանատվության դրսևորումը կապված է պատշաճի կատարման ներքին համոզվածության հետ և իրականանում է ներքին, կամավոր մղումների աղդեցության տակ, բանականության, զգացմունքի և կամքի անմիջական մասնակցությամբ ու ազդեցությամբ։ Ս. Պանովը և Վ. Շաբալինը անձի սոցիալական պատասխանատվությունը բնորոշում են որպես «անհատի կամային վերաբերմունքը հասարակության մեջ տիրապետող արժեքների նկատմամբ, պատասխանատվություն, որն արտահայտվում է կոնկրետ-որոշակի գործունեությամբ և համապատասխան ձևով գնահատվում է վերահսկող ատյանի կողմից»[14]։ Մինչդեռ բարոյական պատասխանատվությունը բարոյագիտական կատեգորիա է և օգտագործվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է ընդգծել, որ «մարդու կողմից այս կամ այն պարտականությունների կատարումը կախվածության մեջ չի դրվում արտաքին սանկցիաներից կամ օգտապաշտական շահերից, այլ հենվում է իր կողմից որոշակի պարտականությունների ազատ ընտրության վրա»[15]։

Մեր մասնագիտական գրականության մեջ բարոյական պատասխանատվության միասնական բնորոշում չկա։ Տարբեր հեղինակներ հիմնական ուշադրությունը դարձնում են բարոյական պատասխանատվության այս կամ այն կողմի վրա։ Ըստ Ա. Շիշկինի և Կ. Շվարցմանի բնորոշման, «բարոյական պատասխանատվությունն ամենից առաջ հանդես է գալիս որպես անձի կողմից սեփական արարքների ինքնագնահատական, որը դրսևորվում է որոշակի ներքին վիճակի, անձի կողմից արարքների ապրումների, խղճի զգացումի մեջ»[16]։ Իսկ Ա. Չերմենինան ընդգծում է բարոյական պատասխանատվության մեկ այլ գիծը, որը մի կողմից «սահմանափակում է կամայականությունը», իսկ մյուս կողմից՝ «խթանում անհատի ակտիվությունը»[17]։ Ի տարբերություն սոցիալական պատասխանատվության, որին հատուկ է ծավալման տեղային բնույթը,

---

13 Նույն տեղում, էջ 251։

14 А. Т. Панов, В. А. Шабалин, նշվ. աշխ., էջ 20։

15 Л. М. Архангельский, Курс лекций по марксистско-ленинской этике, М., 1974, с. 215.

16 А. Ф. Шишкин, К. А. Шварцман, XX век и моральные ценности человека, М., 1968, с. 259.

17 А. П. Черменина, Проблема ответственности в этике (автореферат канд. дисс., Л., 1969, с. 13).

բարոյական պատասխանատվությունն ինչ-որ իմաստով ունի համընդգրկող նշանակություն և վերջին հաշվով նպատակաուղղված է դեպի «բոլոր ժամանակներն ու ժողովուրդները»[18]։

Բարոյական և սոցիալական պատասխանատվության տարբերակման հարցում, անկասկած, կարևոր նշանակություն ունի արարքի սոցիալական և բարոյական հիմնավորումը։ Յուրաքանչյուր արարքի բարոյական հիմնավորումը ունի իդեալական բնույթ և իրականանում է «խրախուսման և պարսավանքի, դրական և բացասական գնահատականի միջոցով»[19] և պայմանավորված է նրանով, որ գործունեության սուբյեկտը «ինքը գնահատի իր գործունեությունը և համապատասխան ձևով կարգավորի իր վարքը»[20], ելակետ ունենալով հասարակական կարծիքը։ Մինչդեռ նույն արարքի սոցիալական հիմնավորումը ենթադրում է ոչ միայն արարքի անհրաժեշտության հետ կապված ներքին հիմնավորում, այլև նյութական և իրավական սանկցիաների անմիջական ազդեցություն, կարգավորում դրսից՝ հարկադրանքի և ճնշման միջոցների օգնությամբ։ Գիտնականի բարոյական և սոցիալական պատասխանատվության փոխհարաբերության և տարբերակման անհրաժեշտության հարցը քննելիս նպատակ ունենք ցույց տալ, որ հակադիր հասարակարգերի պայմաններում գիտատեխնիկական հեղափոխության աննախադեպ զարգացումը դնում է գիտնականի պատասխանատվության նոր եղանակի անհրաժեշտության հարցը, որն իր մեջ պետք է ընդգրկի ոչ միայն բարոյական, այլև սոցիալական պատասխանատվության տարրերը, առանց որոնց հնարավոր չէ լուծել գիտության սոցիալական հետևանքների հետ կապված բացասական երևույթների խնդիրը։ Ինչպես նշեցինք, գիտնականի պատասխանատվության այդ նոր եղանակը ավելի ճիշտ կլինի անվանել գլոբալ բնույթի բարոյական պատասխանատվություն։

Գիտնականի պատասխանատվությունը, որպես հասարակական հարաբերությունների որոշակի ձևի, դրսևորվում է հասարակական կենսագործունեության պրոցեսում և ռեալ կերպով ենթադրում է. ա) պատասխանատվության սուբյեկտի («կրողի»՝ «ո՞վ է պատասխանատու»), բ) պատասխանատվության առյանի («ո՞ւմ առաջ է պատասխանատու»), գ) պատասխանատվության առարկայի («ինչի՞ համար է պատասխանատու») առկայությունը»[21]։ Ա. Օրեխովսկին, ընդունելով Կ. Նեմիրայի դրույթները, իր հերթին «պատասխանատվության առյանի» հետ միացնում է նաև «պատասխանատվության չափի» հարցը («ո՞ւմ առաջ է սուբյեկտը պատասխանատու և ինչպիսի՞ն է պատասխանատվության աստիճանը»)[22], որը, անշուշտ, կարևոր է և հնարավոր չէ այն շրջանցել, քանի որ պատասխանատվության առարկայի և պատասխանատվության սուբյեկտի փոփոխության հետ համապատասխանաբար փոփոխվում է նաև ոչ միայն պատասխանատվության առյանը, այլև պատասխանատվության չափը։ Որքանով հավաքական է դառնում պատասխանատվության սուբյեկտը և որքանով մեծանում է պատասխանատվության առարկան, ձեռք բերելով որոշիչ նշանակություն, այնքանով ավելի հավաքական է դառնում նաև պատասխանատվության պտյանը և մեծանում է սուբյեկտի պատասխանատվության չափը։ Կ. Նեմիրան, ճիշտ նկատելով այդ երբությունը գրում է, որ «պատասխանատվության սուբյեկտը, որոշակի իմաստով, կարող է լինել նաև ներկայումս ապրող մարդկությունը, եթե առյանը մարդկության ապագան է»[23]։

Պատասխանատվության առյանի հարցը գիտնականի բարոյական պա-

---

13 О. Г. Дробницкий, Проблемы нравственности, М., 1978, с. 43.

19 Նույն տեղում, էջ 43։

20 Նույն տեղում, էջ 63։

21 К. Л. Немира, նշվ. աշխ., էջ 260։

22 А. И. Ореховский, Методологический анализ проблемы ответственности («Философские науки», 1983, № 11, с. 19).

23 К. Л. Немира, նշվ. աշխ., էջ 260։

տասխանատվության դրսևորման կարևորագույն խնդիրներից մեկն է, առանց որի հնարավոր չէ լուծել բարոյական պատասխանատվության հետ կապված որևէ հարց, առավել ևս, եթե այն ունի ոչ միայն բարոյական, այլև սոցիալական բնույթ։ Նախկինում բարոյական պատասխանատվության ատյանի տակ ընդունում էին աստծուն։ Աստվածային զորությունը համարվում էր այն գերագույն ուժը, որի առաջ գործունեության յուրաքանչյուր սուբյեկտ հաշիվ էր տալիս իր կատարած արարքների համար։ Բուրժուական փիլիսոփայական և բարոյագիտական գրականության մեջ դեռևս կարելի է հանդիպել ուղղություններ, որոնք Ֆ. Դոստոևսկու հերոսի նման ենթադրում են, որ մարդու մեջ գոյություն ունեցող բարոյականի համար պարտական ենք ոչ թե «բնական օրենքին», այլ գերբնական ուժի զորությանը։

Պատասխանատվության ատյանը վերացական հասկացություն չէ, այն միանգամայն կոնկրետ է և որոշակի։ Քանի որ մենք ուսումնասիրում ենք բարոյական պատասխանատվությունը, ապա նրա ատյանը հանդիսանում է ոչ միայն ներկայումս ապրող մարդկությունը, այլև նրանք, ովքեր գալու են հետագայում։ Անտիկ գրականության սովետական հետազոտող Վ. Ցարխոն նշում է, որ «ժողովրդի առաջ մարդու պատասխանատվության հարցը»[24] առաջին անգամ դրվել է Սոլոնի ստեղծագործության մեջ։

Գիտնականի բարոյական և սոցիալական պատասխանատվության փոխհարաբերության հարցի ճիշտ լուծումը մեծապես կարող է օժանդակել գիտնականի հասարակական-քաղաքական ակտիվության դրսևորմանը, հասարակության և մարդկության առաջադրած խնդիրների արդարացի լուծմանը։ Դա առավել մեծ կարևորություն է ձեռք բերել այն պարզ պատճառով, որ իմպերիալիզմի պայմաններում սոցիալական պատասխանատվությունը (հատկապես քաղաքացիական, ազգային, պետական դրսևորումներով) ամբողջությամբ վերցրած կարող է հանդես գալ որպես ծառայություն հայրենիքին, և այդ տեսակետից շատ անգամ թույլատրելի ու արդարացի է համարվում անգամ այնպիսի գործունեությունը (ներառյալ նաև գիտական գործունեությունը), որը համամարդկային արժեքների տեսակետից հանդես է գալիս որպես միանգամայն անարդարացի և անթույլատրելի։ Պատմությունը հիշում է բազմաթիվ նման օրինակներ. նշենք թեկուզև 1914 թ. հոկտեմբերին գերմանական մշակույթի 93 գործիչների առաջ քաշած «Կոչը», ուղղված ամբողջ «կուլտուրական աշխարհին», որտեղ միջազգային իրավունքի տեսակետից փորձ էր արվում արդարացնել գերմանական գլխավոր շտաբի գործունեությունը, Վիլհելմ II-ը ներկայացվում էր ամբողջ աշխարհի խաղաղության երաշխավոր, գովաբանվում էր գերմանական միլիտարիզմը, որպես գերմանական և համաշխարհային կուլտուրայի փրկարար։ Այդ տխրահռչակ «Կոչի» տակ ստորագրեցին համաշխարհային ճանաչում ունեցող շատ գիտնականներ, որոնց թվում նաև Կ. Ռենտգենը, Ֆ. Հաբերը, Մ. ֆոն Լաուեն, Ներնստը, Հեկկելը, Էոլիխը և շատ ուրիշներ։ Առանց ծանոթանալու փաստաթղթի մանրամասներին, նրա տակ ստորագրեցին նաև Մ. Պլանկը և Է. Ֆիշերը[25]։ Գերմանացի գիտնականների մեծ մասը չկարողացավ ճիշտ գնահատել նաև մի այնպիսի երևույթ, ինչպիսին 1919 թ. Մյունխենում ստեղծված Սովետական հանրապետությունն էր։ Նրանց մեծ մասը հանդես եկավ հակահեղափոխության պաշտպանների դիրքերում. «կարգի պահպանության ջոկատների մեջ» երիտասարդ Վ. Հեյզենբերգն ու Մ. ֆոն Լաուեն մարտնչում էին հեղափոխության ուժերի դեմ։ Իսկ Մ. Պլանկը ոչ միայն ուրախությամբ դիմավորեց առաջին համաշխարհային պատերազմը, այլև ուսանողներին ու երիտասարդ գիտնականներին կոչ էր անում մեկնել ռազմաճակատ, որտեղ «մահը պարգևներից ամենաթանկագինն էր», որ երբևէ կարող էին ստանալ նրանք[26]։

[24] В. Н. Ярхо, Эсхил, М., 1968, с. 41.

[25] Ф. Гернек, Альберт Эйнштейн. Жизнь во имя истины, гуманизма и мира, М., 1966, с. 124.

[26] Ф. Гернек, Пионеры атомного века, М., 1974, с. 150.

Իմպերիալիզմի պայմաններում գիտնականի բարոյական և սոցիալական պատասխանատվության առանձնացման հարցը դնում է նաև քաղաքական գիտությունների պրոֆեսորի օգնական Ջ. Հաբեր�ը. նա անդրադառնալով 1939—1945 թթ. գիտնականների գործունեության առանձնահատկություններին, նկատում էր, որ գերմանացի շատ գիտնականներ՝ Վ. Հեյզենբերգը, Մ. Պլանկը, Օ. Հանը և ուրիշներ, փորձում էին նացիզմը հաշտեցնել իրենց բարոյական դիրքորոշման հետ։ Նրանց բարոյական և քաղաքական սկզբունքները մերթ ընդ մերթ հակադրվում էին միմյանց և թվում էր, թե ուր որ է կհաղթանակի բարոյականը, սակայն, ընտրություն կատարելով խղճի և ուժի, ինտերնացիոնալիզմի և նացիոնալիզմի, արդարության և «հայրենասիրության» միջև, նրանք հակվեցին ուժի, նացիոնալիզմի և «հայրենասիրության» կողմը[27]։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցման, հակադիր հասարակարգերի միջև եղած հակասության անընդհատ սրման պայմաններում, երբ հասարակությունը ձեռք է բերել այնպիսի միջոցներ, որոնք ընդունակ են ոչնչացնելու ոչ թե առանձին քաղաքներ, այլ ամբողջ մոլորակը, երբ աղտոտում է սպառնում համաշխարհային օվկիանոսին, երբ միջուկային սպառազինության մրցավազքը հասարակությանը կանգնեցրել է լինել-չլինելու խնդրի առաջ, անչափ կարևոր է այն, թե արդյոք ձեռք է բերվել «նորովի մտածելու» ընդունակություն, թե ոչ։ Պագուոշյան շարժման հիմնադիրներ Բ. Ռասելի և Ա. Էյնշտեյնի պատկերավոր խոսքերով ասած՝ «Տվյալ դեպքում մենք հանդես ենք գալիս ոչ թե որպես այս կամ այն ժողովրդի, աշխարհամասի և դավանանքի ներկայացուցիչներ, այլ որպես կենսաբանական էակներ, որպես մարդկային սեռի ներկայացուցիչներ, որի հետագա գոյությունը գտնվում է կասկածի տակ»[28]։ Եվ գիտնականները, որոնց ավելի հատուկ է դեպի ապագան նայելը, պետք է գիտակցեն ստեղծված իրադրության ամբողջ լրջությունը և անեն ամեն ինչ «Մարդ տեսակին» հնարավոր ոչնչացումից փրկելու համար։

Սակայն 1983 թ. մարտի 23-ի իր ելույթում ԱՄՆ-ի պրեզիդենտը ամերիկյան ժողովրդին առաջարկեց միանգամայն այլ ընտրություն, կոչ անելով ստեղծել հակահրթիռային զենքի նոր հսկայական կոմպլեքսներ, իբր թե զուտ պաշտպանական նպատակներով, որոնք պետք է տեղադրվեն ինչպես երկրի վրա, այնպես էլ տիեզերական տարածություններում։ Իմպերիալիզմի և միլիտարիզմի գաղափարախոսներն ու պաշտպանները հույս են փայփայում, որ անընդհատ սպառազինության շնորհիվ հնարավոր է հասնել մի այնպիսի մակարդակի, երբ, շախմատային լեզվով ասած, սպիտակները սկսում են և հաղթում, մոռանալով այն հայտնի ճշմարտությունը, որ ժամանակակից միջուկային պատերազմում հաղթողներ չեն լինի։

Կապիտալիստական հասարակության մեջ բազմաթիվ գիտնականներ իրենց գիտական գործունեությունը կապում են ռազմական արդյունաբերության հետ, առաջ քաշելով գիտնականի չեզոքության կեղծ գաղափարները, որ իբրև թե գիտնականին չպետք է հետաքրքրի գիտության արդյունքների կիրառելիության հարցը, քանի որ այն քաղաքագետների գործն է և այլն։

Թվում էր, թե ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ճակատագիրը պետք է սթափեցներ հատկապես միջուկային ֆիզիկայի ներկայացուցիչներին։ Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ կապիտալիստական հասարակության մեջ բարոյականության նորմաներն այնքան էլ հարգի չեն, և Պ. Իորդանի, Է. Թելլերի, Ս. Կոենի ծնունդը միանգամայն սպասելի էր, որքան էլ որ անցանկալի լիներ։ «Պատերազմի ձգտումը ընկած է բուն մարդկային բնույթի մեջ»[29],— ասում է նեյտրոնային ռումբի ստեղծող Ս. Կոենը։

---

[27] J. Haberer, Politics and community of Science, N. Y. ea. Reinhold, 1969, p. 177—181.

[28] М. А. Марков, Научились ли мы мыслить по-новому? («Вопросы философии», 1977, № 3, с. 30).

[29] «Литературная газета», 19. VIII. 1981.

«Եթե խաղաղություն ես ուզում, ապա պետք է պատրաստվես պատերազմի» սկզբունքը վաղուց արդեն կորցրել է իր պրակտիկ նշանակությունը։ Նման սկզբունքը ոչ միայն չի արդարացվում, այլև հանդես է գալիս որպես կործանարար երևույթ։ Այդ պատճառով էլ, ինչպես սովետական բոլոր, այնպես էլ արեմտյան առաջադեմ շատ գիտնականներ անդիջում պայքար են մղում գիտության նվաճումները ի վնաս մարդկության կիրառելու դեմ, հօգուտ սպառազինության մրցավազքի թուլացման, հօգուտ տարբեր հասարակարգերի խաղաղ գոյակցության և այլն։

Անդրադառնալով 1983 թ. մարտի 23-ի ԱՄՆ-ի պրեզիդենտի ելույթին, սովետական գիտնականները ամբողջ աշխարհի գիտնականներին ուղղված «Դիմումի» մեջ ընդգծում են նրա անտրամաբանական ու անմարդկային որոշումը և ելնելով պաշտպանական միջոցների խիստ գիտական վերլուծությունից, գրում են. «Հաստատ համոզված ենք, որ միջուկային զինաթափումը հանդիսանում է այն միակ ուղին, որի շնորհիվ պետությունները և ժողովուրդները կարող են ձեռք բերել իսկական անվտանգություն»[30]։

Գիտնականները հանդես են գալիս որպես մարդկության «ուսուցիչ» (Ֆ. Ֆիխտե)[31]։ Ոչ ոք ավելի լավ չի պատկերացնում այն հետևանքների ամբողջ վտանգավորությունը, որ կարող է առաջացնել ժամանակակից միջոցներով մղվող պատերազմը։

Այսպիսով, բնական այն նույն օրինաչափությամբ, ինչով սոցիալական պատասխանատվությունը դիալեկտիկորեն բացասում է գիտնականի բարոյական պատասխանատվությունը, այդ նույն օրինաչափությամբ էլ գիտատեխնիկական հեղափոխության ժամանակակից պայմաններում տեղի է ունենում գիտնականի սոցիալական պատասխանատվության նույնօրինակ բացասումը պատասխանատվության մի նոր՝ գլոբալ բնույթի բարոյական պատասխանատվության որակով։ Բարոյական պատասխանատվությունը, մարդկության համընդհանուր շահերը չափանիշ ընդունելու դեպքում, կարգավորման ազգային, դասակարգային և տեղային սահմաններից բարձրանում է մինչև համամարդկային չափանիշները։

ДИАЛЕКТИКА ВЗАИМООТНОШЕНИЯ МОРАЛЬНОЙ И СОЦИАЛЬНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ УЧЕНОГО

ЮРИЙ ОВАКАНЯН

Резюме

Ряд глобальных проблем, вставших перед человечеством, таких, как обеспечение мира и международной безопасности, экологические, энергетические, продовольственные, заставляют по-новому оценить вопрос о взаимоотношении моральной и социальной ответственности ученых.

Разные виды социальной ответственности ученого при социализме дополняют и стимулируют проявления моральной ответственности, в то время как при империализме они противопоставляются и препятствуют друг другу.

---

30 «Обращение ко всем ученым мира» («Наука в СССР», 1983, № 2, с. 1).

31 И. Г. Фихте, О назначении ученого, М., 1935.